ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
(Ծննդյան 60-ամյակի առիթով)

2016 թ. ապրիլի 27-ին լրացավ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանի ծննդյան 60-ամյակը: Նա ծնվել է 1956 թ. Թալինի Ոսկեթաս գյուղում՝ Հայոց ցեղասպանությունից փրկված հայրենասեր ու քաջ նահապետի գերդաստանում, ուսանել ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1985 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 2003 թ.՝ դոկտորական ատենախոսություններ, 1994 թ. ստացել է դոցենտի, իսկ 2005 թ.՝ պրոֆեսորի կոչումներ: Է. Մինասյանը աշխատել է որպես ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանի օգնական (1979-1982), հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ (1987-1994), դեկանի տեղակալ (1999-2009), իսկ 2009 թ. ընտրվել է դեկան:

Մեծ է նրա ներդրումը ուսանողության կրթության գործում: ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում նա դասավանդում է «Հայոց պատմություն», «Հայ դիվանագիտության պատմություն», «Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն», «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների պատմություն» և «Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն» առարկաները: Նա մի շարք բուհական դասագրքերի («Հայոց պատմության հիմնահարցեր» և «Հայոց պատմություն») համահեղինակ է:

Է. Մինասյանը հրատարակել է մի քանի մենագրություններ և հարյուրից ավելի գիտական հոդվածներ: Նրա հետաքրքրությունների շրջանակում են հայ դիվանագիտության պատմությունը, հայոց պատմության արդի ժամանակաշրջանը, հայրենիք-սփյուռք առնչությունները, ինքնապաշտպանական կռիվները, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Արցախյան ազատամարտը և այլն: «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-2003 թթ.» աշխատությունը (Երևան, 2003) պահանջում էր մի կողմից գիտական խիզախություն, իսկ մյուս կողմից՝ քրտնաջան աշխատանք, յուրահատուկ մեթոդական մոտեցումներ, ընդհանրացումներ կատարելու հմտություն, արդիական ցավոտ հիմնախնդիրների լավ իմացություն և ըմբռնում:

Է. Մինասյանի ուսումնասիրությունների շրջանակը տարիների ընթացքում ավելի ընդլայնվեց: 2005 թ. Միքայել Մուրադյանի համահեղինակությամբ նա հրատարակեց «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (18-19-րդ դդ.)» գիրքը, որը ԵՊՀ մի շարք ֆակուլտետներում հանձնարարվում է նաև որպես գիտաուսումնական ձեռնարկ:

Նրա ուշադրության կենտրոնում միշտ եղել են հայրենիք-սփյուռք առնչությունները: Ա. Վարդանյանի համահեղինակությամբ լույս տեսավ նրա «Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.)» գիտական հոդվածների ժողովածուն (Ստեփանակերտ, 2010), որտեղ զետեղված են նրա երեք ծավալուն հոդվածները՝ նվիրված հայրենիք-սփյուռք հարաբերությունների հիմնական ուղղություններին, մշակութային և գիտական առնչություններին:

2013 թ. հրատարակվեց Է. Մինասյանի «Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն» աշխատությունը: ՀՀ-ի պատմությունից բացի՝ այստեղ մանրամասնորեն ներկայացված են հայկական երկու հանրապետությունների պատմության բոլոր՝ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, դիվանագիտության և սփյուռքի հետ նրանց կապերին վերաբերող առնչությունները: Այն ուսանողությանը կընձեռի հենքային գիտելիքներ: Նշենք, ի դեպ, որ Է. Մինասյանի ղեկավարությամբ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության վերաբերյալ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել տասնյակից ավելի ասպիրանտներ և հայցորդներ:

Է. Մինասյանը մշտապես հետևել է Արցախյան հիմնահարցին, որի վերաբերյալ նա հանրությանն է ներկայացրել կարևոր հոդվածներ: Բացի դրանից, նա միշտ արցախահայության կողքին է, հաճախ է մեկնում այնտեղ և հանդիպումներ ունենում պետական գործիչների ու բանակի ներկայացուցիչների հետ: Նրան մշտապես հուզել է արցախյան հիմնահարցի վերաբերյալ ադրբեջանական կեղծարարության դեմ գիտական պայքարի կազմակերպման խնդիրը: Այս ուղղությամբ նրա գործադրած ջանքերը կարևոր ներդրում են հայոց պատմության նենգափոխման և կեղծարարության դեմ պայքարում:

Նա զբաղվել է նաև հայկական բանակին նվիրված վերլուծություններով, ներկայացրել այնտեղ տեղի ունեցող բարեփոխումների գործընթացը պատերազմի մշտական սպառնալիքի առկայության պայմաններում, ուսումնասիրել ՀՀ ներքին խնդիրները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հիմնահարցերը:

Հայոց դիվանագիտության պատմության վերաբերյալ մեզանում անհնար է գտնել մեկ ամբողջական ուսումնասիրություն: Տարիներ ի վեր դասավանդելով «Հայ դիվանագիտության պատմություն» առարկան՝ Է. Մինասյանն անհրաժեշտաբար զբաղվել է հայոց դիվանագիտության հանգու-

ցային հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Արժեքավոր են նրա դիտարկումները Տիգրան Մեծի ռազմադիվանագիտական գործունեության, ՀՀ-Ռուսաստանի Դաշնություն, հայ-վրացական և հայ-բուլղարական հարաբերությունների ներկա փուլի հիմնախնդիրների վերաբերյալ:

Իր մի շարք ուսումնասիրություններում Է. Մինասյանը հատկապես արժևորել է նաև հայկական ազգային-ազատագրական շարժման հերոսական դրվագները և պետական ու ռազմական գործիչների (Ա. Օզանյան, Մ. Սիլիկյան, Ա. Մանուկյան, Մ. Խրիմյան) գործունեությունը, ուսումնասիրել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ներկա փուլի առանձնահատկությունները, քննարկել նաև այդ գործընթացում ՀՀ-ի դերին առնչվող որոշ հարցեր: Նա տվել է նաև XX դարի վերջին Սումգայիթում և Բաքվում հայերի ցեղասպանության հարցի իրավաքաղաքական գնահատականը:

Գիտաուսումնական աշխատանքներից բացի, Է. Մինասյանը ծավալել է նաև հասարակական գործունեություն: Նա երկար տարիներ «Խնուս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է և աչքի է ընկնում կազմակերպական ու ստեղծագործ աշխատանքով, «Երկրապահ» կամավորական միության վարչության անդամ է, որտեղ մշտապես աջակցում է միության աշխատանքներին և մասնակցում մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործին, ՀՀ հանրային խորհրդի անդամ է, որտեղ հանդես է գալիս հասարակական տարաբնույթ նախաձեռնություններով:

Է. Մինասյանը մեր հեռուստաթերթերի հայրենասիրական հաղորդումների մշտական հյուրերից է, որոնց ընթացքում հանրությանն է ներկայացնում հայոց պատմության տարբեր հիմնահարցեր:

Նա պարգևատրվել է «Լեռնային Ղարաբաղի ազատագրության համար» ոսկե մեդալով, ԵՊՀ ոսկե մեդալով, ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվո մեդալով, ՀՀ վարչապետի հուշամեդալով, «Գարեգին Նժդեհ» և «Դրաստամատ Կանայան» մեդալներով, Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե հուշամեդալով և «Մովսես Խորենացի» մեդալով:

Մաղթենք նրան երկար տարիների կյանք և գիտական նորանոր նվաճումներ:

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ